ների վերնագիրները։ Կայ մի յիշատակարան $125^{բ}$. ՈԽԲ (=1193 թ.) թուականով, խակական շեղագիր։ Մարկոսի ամբողջ աւետարանը սրբագրուած է բոլորագիր—շեղագրով կամ առոգանութեան նշաններ գրուած, բայց ոչ բուն գրչի ձեռքով, հաւանօրէն ԺԲ—ԺԳ. դարում (առաւօտ բառն այսպէս գրուած)։

58. Մատ. Ս. էջմ. Գ. № 124/2600. Ճառընտիր, Առ որս Աստուածաբանի, հաստ, մագաղաթանման, կոկած և օսլայած թուղթ, $26\times18\frac{1}{2}$ սմ., 265 թերթ։ ԳԻՐ. Սքանչելի, միջին երկաթագրով. վերնագիրը կարմրադեղով և փոքր երկաթագրով, նոյնպէս շատ գեղեցիկ. 16,8×10,8 սմ.։ ԳՐԻՉՆ ու ԺԱՄԱՆԱԿՆ անյայտ։ ՍՏԱՑՈՂ «Գրիգորէս Հայոց կաթողիկոս» 26. կամ «Հոգևոր տ՞ր Գրիգորէս» $79^{ա}$. տես և $83^{ա}$ $116^{ա}$. $158^{բ}$. $181^{բ}$. $211^{բ}$ և $245^{բ}$. ընդգծուած յիշատակարանները խոշոր երկաթագրով։ Ո՞ր Գրիգորիսն է, դժուար է ճշդութեամբ որոշել. կարծում եմ Գրիգոր Վկայասէր կամ Գրիգոր Գ., ուրեմն ԺԱ.—ԺԲ. դարու գիր։

Նկարուած է $179^{բ}$. բնագիրը $14,2\times10\frac{1}{2}$ սմ., առաջին տողը. մեր նկարը 13,7×10, քիչ փոքր բնագրից։

59. Մատ. Ս. էջմ. №898/985(Կ. 879)։ Ճաշոց. նկարազարդ մագաղաթ, $31\frac{1}{2}\times22\frac{1}{2}$ սմ., 281 թերթ։ ԳԻՐ. Միջին, ուղղանկիւն երկաթագիր, խորաները փոքր երկաթագիր. գեղեցիկ գրչութեամբ։ ԳՐԻՉ, ԺԱՄԱՆԱԿ, ՏԵՂ. Անյայտ. համարում եմ ԺԱ.—ԺԲ. դարու գործ։

Նկարուած է $155^{ա}$. բնագիրը 8,9. մեր նկարը $9,2\times15\frac{1}{2}$ սմ., գրեթէ նոյն մեծութեամբ։

60. Մատ. Ս. էջմ. №1239/1214 (Կար. 1209). Մեկնութիւն մարգարէութեան Եսայեայ՝ Յովհաննու որդւոյ Մուշին. հաստ, մագաղաթանման թուղթ, $24\frac{1}{2}\times17\frac{1}{2}$ սմ.։ ԳԻՐ Անցման բոլորգիր, երկաթագրի և շեղագրի խառնուրդով, մի իջեան, $20\times15\frac{1}{2}$ սմ ։ ԳՐԻՉ և ծեղինակ. Յոհաննէս . . . կրաւնաւոր որդի Մուշին և աշակերտ տ՞ր վարդապետին Թադէոսի»։ ՏԵՂ. «ի գեղս, որ կոչի Մարմէտ (Վասպուրականի), ընդ հովանեաւ տ՞ր գերեզմանի վարդապետին Թադէոսի» (հեղինակի ուսուցիչը)։ ԺԱՄԱՆԱԿ. 1118 թ. փրկչական. «եւ գրեցաւ ի ՇԿԷ թուականիս հայոց . . . ի հայրապետութեանն տ՞ն Դաւթի հաոց կաթողիկոսի ի Վասպ.»

Ծանօթ. Այս Զ-ը արժանի է ուշադրութեան, իւր խառն գրչութեամբ և իբրև հեղինակի ձեռքով գրուած սկզբնական օրինակ, unicum, որից արտագրութիւն յայտնի չէ մինչև այժմ։ Հեղինակը յաճախ նոր բաներ է աւելացրել և այդպիսի դէպքերում շեղագրին աւելի մօտ ձևերով։ Ինքն էլ Ներողութիւն է խնդրում «վասն տգեղութեան գրոյս»։ Մի յետին ձեռք աւելացրել է կէտադրութիւնը և լրացրել պակաս թողած տառեր. մի երկրորդ, աւելի յետին ձեռք կարմիր թանաքով անատեղ նշաններ դրել։ Ընտրել ենք այնպիսի երես, ուր յետին ձեռքը շատ քիչ նորութիւն է մտցրել. եղածները հետևեալներն են. ա) չորրորդ տող. «եւ եթէ», եւ-ի վերայ բոլորակ նշան՝ կարմիր թանաքով. բ) երրորդ տող «յայտ առնէ», Ն-ի գլխից սև թանաքով կեռացրել է. «զոր աւրինակ այր տէր» բառերի վերայ մի մի բութ աւելացրել. գ) իննե-